ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՍՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության եւ Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ իր.գ.դ., պրոֆեսոր Ղամբարյան Ա. Ս.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Իրավունքի տեսության հիմնախնդիրները

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Ներածություն

«Իրավունքի տեսության հիմնախնդիրները» վերնագրով ուսումնական դասընթացը դասավանդվում է իրավաբանական ուղղվածությամբ բուհերի կամ առանձին բուհերի համանուն ֆակուլտետների մագիստրոսի կրթական ծրագրերի շրջանակներում: Այն բարձրագույն իրավաբանական կրթության առարկաների համակարգում զբաղեցնում է կենտրոնական տեղ:

Իրավունքի տեսության հիմնախնդիրները հումանիտար, հիմնարար, ընդհանրացնող և իրավագիտության համար մեթոդաբանական նշանակություն ունեցող գիտություն է՝ իրավունքի գոյության և զարգացման ընդհանուր և հիմնական օրինաչափությունների մասին:

Իրավունքի տեսության հիմնարար բնույթով պայմանավորված, այն փոխկապված է ճյուղային իրավական գիտությունների հետ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում իրավաընկալման, իրավունքի համակարգի, իրավունքի տարբեր աղբյուրների վերլուծությանը, օրինաստեղծ գործընթացի առանձնահատկություններին, իրավահարաբերությունների, իրավունքի մեկնաբանման և իրացման խնդիրներին, իրավական կոլիզիաների լուծման և բացերի հաղթահարման, իրավախախտումների և իրավական պատասխանատվության խնդիրներին:

Դասընթացի նպատակը և խնդիրները: Դասընթացի հիմնական նպատակը ուսանողների մոտ իրավունքի առաջացման, իրավունքի հասկացության և էության, իրավագիտակցության, իրավունքի աղբյուրների, իրավունքի նորմերի, իրավական համակարգի, իրավաստեղծագործության, իրավակիրառման, իրավունքի մեկնաբանման, իրավաբանական պա¬տասխանատվության մասին գիտելիքների ձևավորումն է, ինչպես նաև մասնագիտական մակարդակի իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորումը:

Դասընթացի խնդիրները:

Դասընթացի շրջանակներում առաջադրվում են հետևյալ խդիրները.

- ✓Իրավունքի տեսության վերաբերյալ ստացած գիտելիքների հիման վրա իրականացնել հասարակական քաղաքական կյանքի պետաիրավական երևույթների, իրավունքի գոյության և զարգացման ընդհանուր և հիմնական օրինաչափությունների համեմատական վերլուծություն,
- ✓ձևավորել մասնագիտական արհեստավարժություն,
- ✓ ձևավորել պետաիրավական երևույթները վերլուծելու, ստացված տեսական գիտելիքները ճիշտ կիրառելու կարողություն:

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

- Հիմնական իրավունքի պաշտպանության ոլորտը.
- Հիմնական իրավունքի սահմանափակումը: Հիմնական իրավունքի սահմանափակման արդարացումը (սահմանափակման սահմանափակումը): Հիմնական իրավունքի ստուգման սխեման.
- Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի համակարգը.
- Contra legem իրավունքի զարգացման դոկտրինի իրավափիլիսոփայական հիմնախնդիրները: Contra legem իրավունքի զարգացման տեսական հիմնախնդիրները: Contra legem իրավունքի զարգացման լեգիտիմացումը և զսպումների կառուցակարգերը.

կարողանա՝

- Տարբերել հիմնական «իրավունք» և «ազատություն» հասկացությունները.
- Տարբերել ենթաօրենսդրական ակտ ընդունելու՝ «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները.
- Մեկնաբանման նորմերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Մեկնաբանման կանոնները.
-

ունակ լինի՝

- Վերլուծել նորմատիվ իրավական ակտերը.
- Առաջադրվող խնդիրների շուրջ բանավեճերի և քննարկումների մասնակացնել, սեփական կարծիքն իրավաբանորեն հիմնավորել.
- Վեր հանել օրենսդրական բացերը և կոլիզիաները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 8 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4 ուսումնական տարվա 2 կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր

1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**144**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**18**
1.1.1.Դասախոսություններ	**10**
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**8**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**126**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	

2.3. Առարկայի ծավալը՝ 144 ժամ, կրեդիտ՝ «4» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Հիմնական իրավունքները, պաշտպանության ոլորտները և սահմանափակումները Հիմնական «իրավունք» և «ազատություն»: Հիմնական իրավունքի պաշտպանության ոլորտը: Հիմնական իրավունքի սահմանափակումը: Հիմնական իրավունքի սահմանափակման արդարացումը (սահմանափակման սահմանափակումը): Հիմնական իրավունքի ստուգման սխեման	3	1	2
Թեմա 2. Իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Անհատական իրավական ակտերը: Նորմատիվ իրավական ակտերը: Լոկալ (ներքին) իրավական ակտերը: Նորմատիվ բնույթի լոկալ	2	1	1

իրավական ակտի և նորմատիվ իրավական ակտի հարաբերակցությունը:			
Թեմա 3. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը Ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերը: Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասություն ունեցող մարմիններին որոշելը: Ենթաօրենսդրական ակտ ընդունելու՝ «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները:	**4**	**2**	**2**
Թեմա 4. Իրավական ակտերի մեկնաբանման հիմնախնդիրները Մեկնաբանման նորմերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Մեկնաբանման կանոնները	**3**	**2**	**1**
Թեմա 5. Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը Contra legem իրավունքի զարգացման դոկտրինի իրավափիլիսոփայական հիմնախնդիրները: Contra legem իրավունքի զարգացման տեսական հիմնախնդիրները: Contra legem իրավունքի զարգացման լեգիտիմացումը և զսպումների կառուցակարգերը: Օրինականության սկզբունքը և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթը contra legem իրավունքի զարգացման դոկտրինի համատեքստում	**3**	**2**	**1**
Թեմա 6. Լռությունը և լռելյայն համաձայնությունն իրավահարաբերությունների կառուցակարգում Իրավական նշանակություն ունեցող լռությունը: Լռության և դրանից բխող ֆիկտիվ բնույթի եզրահանգումների իրավական ռեժիմները	**3**	**2**	**1**
Ընդամենը	**18**	**10**	**8**

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

Թեմաներ

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Թեմա 1. Հիմնական իրավունքները, պաշտպանության ոլորտները և սահմանափակումները

Հիմնական «իրավունք» և «ազատություն»: Հիմնական իրավունքի պաշտպանության ոլորտը: Հիմնական իրավունքի սահմանափակումը: Հիմնական իրավունքի սահմանափակման արդարացումը (սահմանափակման սահմանափակումը): Հիմնական իրավունքի ստուգման սխեման

Թեմա 2. Իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում

Անհատական իրավական ակտերը: Նորմատիվ իրավական ակտերը: Լոկալ (ներքին) իրավական ակտերը: Նորմատիվ բնույթի լոկալ իրավական ակտի և նորմատիվ իրավական ակտի հարաբերակցությունը

Թեմա 3. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը

Ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերը: Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասություն ունեցող մարմիններին որոշելը: Ենթաօրենսդրական ակտ ընդունելու՝ «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները

Թեմա 4. Իրավական ակտերի մեկնաբանման հիմնախնդիրները

Մեկնաբանման նորմերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Մեկնաբանման կանոնները

Թեմա 5. Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը

Contra legem իրավունքի զարգացման դոկտրինի իրավափիլիսոփայական հիմնախնդիրները: Contra legem իրավունքի զարգացման տեսական հիմնախնդիրները: Contra legem իրավունքի զարգացման լեգիտիմացումը և զսպումների կառուցակարգերը: Օրինականության սկզբունքը և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթը contra legem իրավունքի զարգացման դոկտրինի համատեքստում

Թեմա 6. Լռությունը և լռելյայն համաձայնությունն իրավահարաբերությունների կառուցակարգում

Իրավական նշանակություն ունեցող լռությունը: Լռության և դրանից բխող ֆիկտիվ բնույթի եզրահանգումների իրավական ռեժիմները

4. Գրականության ցանկ

Հիմնական՝

1. Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Երևան, Քոփի Փրինթ, 2024
2. Կոլիզիոն իրավունք: Գիտագործնական ձեռնարկ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. Եր.: ՀՌՀ հրատ., 2023
3. Ղամբարյան Ա., Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմինները և սահմանադրական մարմինները: Եր.: Հեղ. հրատ, 2023
4. Ղամբարյան Ա., Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորություն ունեցող մարմինների նույնականացումը ՀՀ-ում // Օրինականություն, 2023, № 133, էջեր 61-101
5. Ղամբարյան Ա., Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը Հայաստանի Հանրապետության անկախացման գործընթացում // Գիտական Արցախ, 2021, №3 (10), էջեր 86-97
6. Ղամբարյան Ա., Իրավունքի և օրենքի կոլիզիաները իրավունքի փիլիսոփայությունում // Գիտական Արցախ, 2021. № 1(8), էջեր 75-76
7. Гамбарян А. Указ Президента РФ № 1400 – правомерный акт contra constitutionem // Вестник Конституционного Суда Республики Армения, 2023, № 1 (109), С. 8-34
8. Гамбарян А. С. Молчание в праве (общетеоретические и уголовно-процессуальные аспекты). Ер.: Тигран Мец, 2020
9. Гамбарян А. С., Даллакян Л. Г. Проблема законов ненормативного характера: вопросы теории и практики // Советник юриста. 2017. № 12. С. 78-84
10. Гамбарян А.С., Даллакян Л.Г. Трансгрессия законодательных терминов и дефиниций в контексте отраслевой автономии // Государство и право, 2018. № 12, էջեր 93–103
11. Гамбарян А. С. Развитие права советскими судьями вопреки закону (contra legem) // Судебная власть и уголовный процесс. 2023. № 2. С. 7-26
12. Гамбарян А. Развитие парламентом права contra constitutionem в Республике Армения // Сравнительное конституционное обозрение. 2022. № 4 (149).
13. Гамбарян А. С. Принцип законности и положение «судья подчиняется закону» в контексте доктрины развития права contra legem // Правоприменение. 2023. Т. 7, № 4. С. 19-20

Ինտերակտիվ կայքեր՝

1. www.arlis.am
2. www.parliament.am:
3. www.concourt.am

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

1. Իրավական վարքագծի հասկացությունը և տեսակները
2. Իրավական համակարգերի հասկացությունը և դասակարգումը
3. Իրավագիտակցություն և իրավական մշակույթ
4. Իրավունքի նորմի կառուցվածքը
5. Իրավական կարգավորումը, որպես իրավական ազդեցության հիմնական տեսակ
6. Իրավական դոկտրին
7. Դատական նախադեպ
8. Իրավաբանական իրավաընկալում
9. Իրավական պետության հատկանշական գծերը
10. Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը
11. Սոցիոլոգիական իրավաընկալում
12. Նորմատիվ պայմանագիրը, որպես իրավունքի աղբյուր
13. Իրավունքի աղբյուրների հասկացությունը և տեսակները
14. Անկախության հռչակագիրը իրավունքի աղբյուրների համակարգում
15. Իրավաբանական վարույթի հասկացությունը, հատկանիշները և տեսակները
16. Իրավական կարգավորման ձևերը
17. Իրավունքի իրացման հասկացությունը և ձևերը
18. Իրավական սովորույթը, որպես իրավունքի աղբյուր
19. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը
20. Մարդու հիմնական իրավունքների հասկացությունն ու կառուցվածքը
21. Պետական մարմին. հասկացությունը և տեսակները
22. Պետական մեխանիզմի ձևավորման և գործունեության սկզբունքները
23. Իրավունքի սկզբունքներ և իրավական աքսիոմաները, որպես իրավունքի աղբյուր
24. Իրավագիտակցության հասկացությունը և իր մեթոդոլոգիական նշանակությունը
25. Պետական իշխանության լեգիտիմությունն ու լեգալությունը (ՍԴՈ-412 16/04/2003)
26. Մարդու հիմնական իրավուքների և ազատությունների դասակարգումը
27. Պետության և տնտեսության հարաբերակցությունը
28. Իրավաբանական կանխավարկածներ և ֆիկցիաներ
29. Իրավական կարգավորման հասկացությունը, տեսակները և փուլերը
30. Իրավակիրառ հայեցողության հասկացությունը, նշանակությունը և տեսակները
31. Իրավական /օրենսդրական/ բացերը. իրավունքի նորմի անալոգիայով կիրառումը
32. Վարչական ակտի հասկացությունը և տեսակները
33. Իրավաբանական կոլիզիաների հասկացությունը, առաջացման պատճառները և լուծման եղանակները
34. Անկախության հռչակագիրը, որպես իրավունքի աղբյուր
35. Իրավունքի չարաշահում

36. Ապացուցման հասկացությունը և վերջինիս բաղադրատարրերը
37. Իրավունքի մեկնաբանման եղանակները
38. Իրավախախտման հասկացությունը, կառուցվածքը և տեսակները
39. Պետության գործառույթների հասկացությունը և համակարգը
40. Իրավունքի և սոցիալական այլ կարգավորիչների հարաբերակցությունը
41. Հանրային և մասնավոր իրավունք
42. Դատական ակտի հասկացությունը և տեսակները
43. Իրավաբանական փաստերի հասկացությունը և տեսակները
44. Լեգիստական/պոզիտիվստական/ իրավաընկալում
45. Նորմատիվ-իրավական ակտ
46. Իրավաբանական վարույթի սկզբունքները
47. Ապացույցի հասկացությունը, հատկանիշները և տեսակները
48. Պետական անվտանգության ապահովման գործառույթը
49. Կառավարման ձևը և տեսակները
50. Իրավունքի սկզբունքներ. հասկացությունը և տեսակները
51. Իրավահարաբերության հասկացությունը, հատկանիշները և տեսակները
52. Կոլիզիոն նորմերի մրցկացությունը
53. Իրավաբանական պատասխանատվության հասկացությունը, հատկանիշները և տեսակները
54. Իրավահարաբերության օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը
55. Իրավական որոշակիության և իրավունքի գերակայության սկզբունքները՝Վենետիկի հանձնաժողովի 11/03/2016 «Իրավունքի գերակայության գնահատման հարցերի ղեկավար ցանկ»-ի լույսի ներքո
56. Օբյեկտիվ հակահրավական վարքագիծը
57. Ինտեգրատիվ իրավաընկալում
58. Իրավակիրառ գործունեության հասկացությունը, հատկանիշները և տեսակները
59. Պետական հարկադրանքի հասկացությունը, հատկանիշները և տեսակները
60. Մարդու իրավունքի եռատարր կառուցվածքը
61. Պետության կառուցվածքի ձևը
62. Իրավական / օրենսդրական / բաց. իրավունքի նորմի անալոգիայով կիրառումը

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելինքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն։

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելինքերի արդյունքում։